



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Միջառարկայական կապերի դերն ու
նշանակությունը տարրական դասարաններում

ԱՌԱՐԿԱ

Մաթեմատիկա

ՀԵՂԻՆԱԿ՝

Աննա Կոստանյան

ՄԱՐԶ

Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Գ. Մահարու անվան հ. 176 հիմն. դպրոց

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ .1 ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԿԱՊԸ ՍՅՈՒՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԵՏ.....	5
1.1 Մաթեմատիկայի և տեխնոլոգիայի կապը.....	6
1.2 Մաթեմատիկայի և կերպարվեստի կապը.....	9
1.3 Մաթեմատիկայի և մայրենիի կապը	10
1.4 Մաթեմատիկայի և ֆիզիկուլտուրայի կապը.....	14
ԳԼՈՒԽ .2 ԷՔՍԿՈՒՐՄԻԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	14
Եզրակացություն.....	17
Օգտագործված գրականություն.....	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դասարաններում դրվում են գիտելիքների ու կարողությունների հիմքերը, աստիճանաբար հարստանում է աշակերտների խոսքը, զարգանում է նրանց մտածողությունը: Երեխաների ընդհանուր զարգացումն ապահովելու համար նրանց մեջ ոչ միայն գրելու, կարդալու կարողություններ պետք է ձևավորել, այլև պետք է սովորեցնել շրջապատում տեսնել լավը, գեղեցիկը, նրանց հաղորդել աշխարհաճանաչողական գիտելիքներ: Այդ ամենին հասնելու համար օգնության են գալիս միջառարկայական կապերը:

Միջառարկայական կապերի օգտագործումը բարդ աշխատանք է և ուսուցչից մեծ վարպետություն և հմտություն է պահանջում: Միջառարկայական կապերի օգտագործման շնորհիվ հնարավոր է դառնում հարստացնել դասը ճանաչողական, կրթադաստիարակչական տեսակետից, ինչպես նաև հնարավոր է դառնում կիրառել այլ գիտությունների տվյալները, որոնց ծավալը կախված է ուսուցչի գիտելիքների պաշարից, մանկավարժական վարպետությունից:

Միջառարկայական կապերը միանգամայն դրականորեն են ազդում ինչպես նյութի յուրացման, երեխաների ճանաչողության սահմանների ընդլայնման, այնպես էլ նրանց համակողմանի դաստիարակության վրա և նպաստավոր պայմաններ են ստեղծում ուսուցումն արդյունավետ դարձնելու համար: Մեծ հնարավորություններ են ստեղծում նաև նոր գիտելիքները շրջանառության մեջ դնելու, նոր տեղեկություններ հաղորդելու, նոր հասկացություններ ձևավորելու առումով:

Միջառարկայական կապերի մասին Յ. Ա. Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝

մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան, նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ>>:

Այսպիսով՝ այլ գիտությունների տվյալներն ու փաստերը պետք է լայն կերպով օգտագործվեն ուսուցման ընթացքում՝ ստեղծելով կրթության և դաստիարակության համար նպաստավոր պայմաններ և ընդլայնելով աշակերտների մտահորիզոնը: Տարրական դասարաններում միջառարկայական կապերի օգտագործումը դասը դարձնում է ավելի հետաքրքրական և աշխույժ, բայց այն կարելի է օգտագործել միայն այն դեպքում, երբ կօգնի նյութի խորը և բազմակողմանի յուրացմանը:

Հետազոտության նպատակը՝ ցույց տալ, որ միջառարկայական կապերի օգտագործումը օգնում է բացատրվող նյութի ճիշտ յուրացմանը, անցած և նոր գիտելիքների միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, թույլ է տալիս համակարգել սովորողների գիտելիքները, ձևավորում է աշակերտների աշխարհայացքը և հնարավորություն է տեղծում ուսուցումը կապել կյանքի հետ:

Հետազոտության խնդիրներն են՝

- միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով ինչպե՞ս ստեղծել տրամաբանական կապ անցած և անցնելիք նյութերի միջև
- միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով ինչպե՞ս զարգացնել աշակերտների ստեղծագործական կարողությունները
- միջառարկայական կապերն օգտագործելու միջոցով ինչպե՞ս զարգացնել երեխաների ինքնուրույնությունը:

ԳԼՈՒԽ. 1. Մաթեմատիկայի կապը մյուս ուսումնական առարկաների հետ:

Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցումն ունի իր որոշակի նպատակներն ու խնդիրները: Նրա նպատակն է աշակերտներին զինել մաթեմատիկական գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, ինչպես նաև աշակերտներին սովորեցնել այդ գիտելիքները կիրառել ոչ միայն ուսումնական առարկաների ուսումնասիրության ընթացքում, այլև կյանքում: Մաթեմատիկայի ուսուցումը նպաստում է նաև աշակերտների աշխարհայացքի ձևավորմանը, ինչպես նաև նրանց մեջ զարգացնում է հետաքրքրություն դեպի մաթեմատիկան, իրականացնում է աշակերտների գեղագիտական դաստիարակությունը:

Չկա ուսումնական որևէ առարկա, որ դասավանդվի մյուս ուսումնական առարկաներից առանձնացված: Բոլոր գիտություններն էլ կապված են միմյանց հետ և փոխադարձ ազդեցությունների լայն հնարավորություններ ունեն, որոնք ուսուցման ընթացքում անպայման պետք է օգտագործվեն: Մաթեմատիկայի ուսուցումը լուծում է կրթական, դաստիարակչական մի շարք խնդիրներ: Այն պետք է նպաստի անձի այնպիսի գծերի ձևավորմանը, ինչպիսիք են աշխատասիրությունը, կարգապահությունը, պետք է նպաստի նաև սովորողների կամքի, ուշադրության զարգացմանը, զարգացնի նրանց հետաքրքրությունը դեպի մաթեմատիկան: Իսկ այս ամենին հասնելու համար պետք է մաթեմատիկայի ուսուցումը առավել արդյունավետ դարձնել՝ այն կապելով մի շարք ուսումնական առարկաների հետ: Մաթեմատիկայի ուսուցումն այդ տեսակետից բացառություն չի կազմում և ավելի լայն հնարավորություններ ունի: Այս առումով էլ միջառարկայական կապերի օգտագործումը հատուկ արժեք է ստանում:

Մաթեմատիկան կապված է մայրենիի, տեխնոլոգիայի, կերպարվեստի, ֆիզկուլտուրայի հետ: Մաթեմատիկայի կապը այդպիսի առարկաներից

յուրաքանչյուրի հետ նպաստում է առարկաների մասին ինչպես կոնկրետ, այնպես էլ ընդհանուր պատկերացումների ձևավորմանը:


1.1 Մաթեմատիկայի և տեխնոլոգիայի կապը:

Տեխնոլոգիայի դասաժամին ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ կատարելագործվեն սովորողների աշխատանքային ունակությունները, տարածական պատկերացումները, ստեղծագործական մտածողությունը: Տեխնոլոգիայի դասաժամերի մեծ մասը պետք է կազմակերպել մյուս առարկաների հետ կապված:

Մաթեմատիկան կապված է տեխնոլոգիայի հետ, և այդ կապը երկակի բնույթ է կրում:

Տեխնոլոգիայի դասի ժամանակ ամրապնդվում են մաթեմատիկայի դասերի ժամանակ ձեռք բերված գիտելիքները, իսկ այն պատկերացումները, որ աշակերտներին տրվում են տեխնոլոգիայի ուսուցման ժամանակ, օգտագործվում են մաթեմատիկայի դասերին: Օրինակ՝ տեխնոլոգիայի դասերին պատրաստվում են տարբեր աշխատանքներ, որոնք մաթեմատիկայի դասերին կարող են օգտագործվել որպես զննական պարագաներ, որոնք, ինչպես գիտենք, նպաստում են հասկացությունների ճիշտ ձևավորմանը, մտածողության զարգացմանը: Մյուս կողմից էլ տեխնոլոգիայի դասերին ամրապնդվում են այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել մաթեմատիկայի դասերի ժամանակ: Օրինակ՝ ուղղանկյունանիստի պատրաստման ժամանակ աշակերտները կատարում են տարբեր գործողություններ՝ չափում են, կտրում, կառուցում և այլն: Աշակերտները պետք է օգտագործեն մաթեմատիկայի դասի ժամանակ

ստացած իրենց գիտելիքները՝ ուղղանկյունանիստը ունի 4 բարձրություն, 4 լայնություն և 4 երկարություն:(նկ. 1)



Լայնություն

Նկար 1

Մաթեմատիկայի դասերի ժամանակ օգտագործելով իրենց պատրաստած առարկաները, աշակերտները հեշտությամբ կկարողանան լուծել նմանատիպ խնդիրներ:

Խնդիր 1. Ուղղանկյունանիստի լայնությունը 5 սմ է, բարձրությունը՝ 8սմ, իսկ երկարությունը՝ 6 սմ:Որքա՞ն մետաղալար է անհրաժեշտ այդպիսի մեկ ուղղանկյունանիստ պատրաստելու համար:

Խնդիր 2. Թղթից կտրի՛ր 25 սմ և 15 սմ կողմերով երկու ուղղանկյուն:Դրանցով

պատրաստի՛ր երկու գլան այնպես, որ մեկի բարձրությունը լինի 25 սմ, իսկ մյուսինը՝ 15սմ: Սոսնձելու համար առանձնացրո՛ւ 1 սմ լայնությամբ շերտեր:Թելով և քանոնով չափի՛ր շրջանագծերի երկարությունները և այլն:


Տեխնոլոգիայի դասաժամին ուղղանկյունանիստ պատրաստելու համար էլ երեխաները օգտվում են մաթեմատիկայի դասաժամին ձեռք բերած գիտելիքներից:

Օրինակ՝ մետաղալարից կտրի՛ր տրված չափերով կտորներ և օգտագործելով ձեփոն՝ պատրաստիր ուղղանկյունանիստ:

Երկարություն	20 սմ
Լայնություն	12 սմ
Բարձրություն	10 սմ

Յուրաքանչյուր չափից քանի՞ հատ պետք է կտրել:



Տեխնոլոգիայի ժամին պատրաստված երկրաչափական պատկերները շատ են օգտագործվում մակերեսի ուսուցման ժամանակ: Տեխնոլոգիայի ժամին երեխաները պատրաստում են շրջան, քառակուսի, եռանկյուն: (Տե՛ս նկար 2)



Նկար 2

Մաթեմատիկայի ժամին օգտագործելով իրենց պատրաստած երկրաչափական պատկերները՝ երեխաները համեմատելու միջոցով հասկանում են, որ որքան մեծ է տարածքը, այնքան մեծ է այդ տարածքի մակերեսը: Եթե մի պատկերն ամբողջությամբ տեղավորվում է մյուսի մեջ, ապա այդ պատկերներից առաջինի մակերեսը փոքր է երկրորդի մակերեսից և այլն:

Տեխնոլոգիայի ժամին կարելի է կատարել նաև այսպիսի ապլիկացիոն աշխատանքներ:(Տես նկ.3)



Նկար 3

1. Ի՞նչ պատկերներից են կազմված:
2. Ո՞ր պատկերից քանիսն են օգտագործել տվյալ պատկերը ստանալու համար:


Այդպիսի գործողությունների կատարման ընթացքում կամրապնդվեն աշակերտների ձեռք բերված գիտելիքները:

1.2 Մաթեմատիկայի և կերպարվեստի կապը:

Կերպարվեստը՝ որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի աշակերտների դաստիարակության գործում: Կերպարվեստի միջոցով զարգանում է երեխաների գեղագիտական ճաշակը, շրջապատում գեղեցիկը տեսնելու, գնահատելու կարողությունները:

Ինչպես գիտենք, երկրաչափական պատկերների մասին աշակերտները որոշ պատկերացումներ են ստանում դեռևս նախադպրոցական հասակում: Տարրական դասարաններում երկրաչափական պատկերները հաճախ օգտագործվում են որպես զննական պարագաներ: Հետագայում սովորողների մեջ ձևավորվում են ընդհանուր պատկերացումներ ուղղանկյան, քառակուսու և այլ պատկերների մասին:

Մաթեմատիկայի և կերպարվեստի կապը կայանում է նրանում, որ երկրաչափական պատկերներին աշակերտները ծանոթանում են նաև կերպարվեստի դասերին: Օրինակ՝ օգտագործելով տարբեր երկրաչափական պատկերներ՝ նկարի՛ր տուն, եղևնի, լուսակիր և այլն: (Տես նկ. 4)



Նկար 4

Երկրաչափական պատկերների մասին այն պատկերացումները, որ աշակերտները ձեռք են բերել մաթեմատիկայի դասերի ժամանակ, այստեղ ծառայում են որպես երկրաչափական պատկերների ընդհանրացման միջոց, օգնում են անցնել եզակիից ընդհանուր պատկերացումներին: Մաթեմատիկայի և կերպարվեստի կապն արտահայտվում է նաև մաթեմատիկայի դասագրքերում զետեղված նկարներով: Դրանք ճանաչողական, այս կամ այն տեղեկության, նյութի ու գաղափարի հաղորդման նպատակ են հետապնդում:

1.3 Մաթեմատիկայի և մայրենիի կապը:

Մաթեմատիկան սերտորեն կապված է մայրենի լեզվի ուսուցման հետ և լայն հնարավորություններ է ստեղծում միջառարկայական կապերի իրականացման համար: Այս կապը կարևոր է աշակերտների խոսքի զարգացման և հարստացման համար: Մայրենիի դասերին ոչ միայն պետք է զարգացնել աշակերտների կարդալու տեխնիկան, այլև սովորեցնել կարդալ հասկանալով, որովհետև մաթեմատիկայի ուսումնասիրման, մասնավորապես խնդիրների լուծման գործում առաջին և անհրաժեշտ պայմանը կարդացածի բովանդակությունը հասկանալն է: Մաթեմատիկայի ուսուցման ժամանակ աշակերտները սովորում են նոր բառեր, բառերի կրճատ գրելաձևեր և այլն: Օրինակ՝ շատ հետաքրքիր և զվարճալի է, երբ առաջին դասարանում թվերը ուսուցանվում են հանելուկների միջոցով (նկ. 5):

7 թվի ուսուցման ժամանակ
7-ն էլ գերանդու նման
Ափսոս չունի սուր բերան,
Կոթն էլ բարակ ու երկար
Եվ բռնելու շատ հարմար:



5 թվի ուսուցման ժամանակ
Նա մանգաղ է գիտե՞ս




Բայց դու հնձի չտանես:
Կարելի է խոտ հնձել,
Բայց բռնակն է կոտրվել:

Նկար 5


10

Մեկնաբանվում են գերանդի, կոթ, մանգաղ, հունձ բառերի իմաստները:
Կան նաև հանելուկներ երկրաչափական պատկերների մասին, որոնք և մաթեմատիկայի դասն են հետաքրքիր և՛ զվարճալի դարձնում, և՛ երեխաները նոր բառեր և տերմիններ են սովորում (նկ. 6):

Չորս սյուներ են՝
Ամուր կանգնած,
Երկուսը երկար,
Երկուսն էլ կարճ,
Եվ անկյուններն էլ
Իրար հավասար:



Ես շրջան եմ կլորիկ,
Լուսնի նման սիրունիկ,
Ես անիվ եմ աշխատող,
Ու գաթա եմ կարմրակող:



Նկար 6

Այս բնույթի հանելուկները զարգացնում են երեխաների տրամաբանությունը, սովորեցնում են մտածել, վերլուծել և ամբողջացնել ձեռք բերած գիտելիքները: Որպես մաթեմատիկայի և մայրենիի միջև կապ՝ կարելի է դիտարկել նաև տեքստային խնդիրները: Տեքստային խնդիրներն իրենց բովանդակությամբ ոչ միայն հաշվարկներ կատարելու նպատակ են հետապնդում, այլև դրանք միջոց են միջառարկայական կապերի ապահովման համար:

Խնդիր 1: Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 362 թվականին: Այս տարի Մեսրոպ Մաշտոցի ծննդյան n° ր ամյակն է լրանում:¹

Մաթեմատիկայի և մայրենիի կապն արտահայտվում է նաև տեքստային խնդիրների համառոտագրության ժամանակ, երբ երեխաները սովորում են բառի կրճատ գրելաձևերը, չափման միավորների գրելաձևերը:

Օրինակ՝ I օրը- 125կմ

II օրը- 30կմ-ով ավելի

Ընդամենը - ? կմ

Այստեղ ուշադրություն ենք դարձնում նաև չափման միավորների գրելաձևին, որ չափման միավորների կողքին կետ չի դրվում:

Մաթեմատիկան էլ իր հերթին մեծ դեր է խաղում աշակերտների խոսքի, ուշադրության, հիշողության ձևավորման գործում, դաստիարակում է կամք, ակտիվություն և նախաձեռնություն: Մաթեմատիկայի դասերի ժամանակ աշակերտները սովորում են խոսել բովանդակալից, սովորում են մաթեմատիկական տերմիններ, ինքնուրույն խնդիրներ կազմելու միջոցով էլ զարգանում է երեխաների խոսքը:

¹ Սոկրատ Մկրտչյան և այլք- Մաթեմատիկա: 4-րդ դաս. Դասագիրք: <<Զանգակ>> հրատ., 2022 (էջ 135)

1.4 Մաթեմատիկայի և ֆիզիկուլտուրայի կապը :

Ֆիզիկուլտուրայի դասերի ժամանակ ընդհանուր զարգացնող վարժությունների ընթացքում աշակերտները կոնկրետացնում են մաթեմատիկայի դասերի ժամանակ ձեռք բերված տարածական պատկերացումները: Օրինակ՝ ֆիզիկուլտուրայի դասի ժամանակ աշակերտները կատարում են տարբեր վարժություններ՝ գնդակի նետում վերև, կատարում են դարձումներ աջ, ձախ և այլն:

ԳԼՈՒԽ. 2. Էքսկուրսիաները որպես միջառարկայական կապն ապահովող միջոցառումներ:

Միջառարկայական կապերի ստեղծման համար կարևոր և դրական դեր են կատարում նաև էքսկուրսիաները: Էքսկուրսիաների ժամանակ խախտվում է դասի սովորական ընթացքը, փոխվում է դասի ն՛ տեղը, ն՛ ձևը: Այս փոփոխությունները դրականորեն են ազդում երեխաների աշխուժացման վրա: Էքսկուրսիան ուսուցչին հնարավորություն է տալիս կոնկրետ փաստերի վրա երեխաներին ցույց տալ բնության բազմապիսի առարկաների և երևույթների միջև եղած կապը:

Որպեսզի էքսկուրսիան հասնի հաջողության, այն պետք է լինի հանգամանորեն պատրաստված և պետք է ճիշտ անցկացվի: Էքսկուրսիայի անցկացման ժամանակ ուշադրություն պետք է դարձնել նախապատրաստման, անցկացման և ամփոփման վրա:

Տարվա տարբեր ժամանակներում կրտսեր դպրոցականների հետ կաարելի է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնություն: Կարելի է կազմակերպել նաև այնպիսի էքսկուրսիաներ, որոնք նպատակ ունեն երեխաներին ծանոթացնել տարբեր տեղանքների չափման, չափման գործիքների և դրանց օգտագործման հետ: Այս էքսկուրսիաների ժամանակ երեխաները պատկերացումներ են կազմում ուղղի մասին, հեռավորությունը չափում են

աչքաչափով և այլն:Էքսկուրսիան կարող է սկզբնական աշխատանք հանդիսանալ ծրագրով նախատեսված նյութերի համար: Կրտսեր դպրոցականների հետ կարելի է էքսկուրսիա կազմակերպել դեպի այգի: Այս էքսկուրսիայի ժամանակ ուսուցիչը երեխաներին կարող է տեղեկություններ հաղորդել.

Տարբեր ծառերի տևական կյանքի մասին:

Եղևնին ապրում է մինչև 1200 տարի, սոճին՝ 600 տարի և այլն:

Թռչունների օգտակարության մասին

●Բուն մեկ գիշերվա ընթացքում ուտում է 7–8 մուկ:Բվի մեկ ընտանիքը 1 տարվա ընթացքում ոչնչացնում է մինչև 10000 մուկ՝ փրկելով մինչև 20 ս ցորեն, որը կարող են ոչնչացնել մկները:

●Կլուն, որին երեխաները հաճախ լսում են էքսկուրսիայի ժամանակ, մեծ օգուտ է տալիս: Մեկ օրվա ընթացքում նա ուտում է ամենաքիչը 40 թրթուր, մինչև 40 մորեխ:

Նմանատիպ էքսկուրսիաների ժամանակ կարելի է երեխաներին սովորեցնել շատ ծառերի և թփերի, ծաղիկների, կենդանիների անուններ:Էքսկուրսիաների ժամանակ ձեռք բերված նյութերով մաթեմատիկայի դասերին կարելի է կազմել և լուծել մի շարք խնդիրներ: Օրինակ՝

Խնդիր 1: Այգում կար 30 եղևնի, 45 սոճի և մի քանի կաղնի:Քանի՞ կաղնի կար այգում, եթե ընդամենը կար 90 ծառ:

Խնդիր 2: Առաջին դասարանի աշակերտները հավաքեցին 10 կգ դեղաբույս, իսկ երկրորդ դասարանցիները՝ 3 կգ- ով ավելի: Ընդամենը քանի՞ կիլոգրամ դեղաբույս հավաքեցին առաջին և երկրորդ դասարանցիները միասին:

Էքսկուրսիաներից բերված նյութերի օրինակները կարելի է օգտագործել տեխնոլոգիայի դասերին:Օրինակ՝ կաղիններով պատրաստել մարդուկներ:

Կերպարվեստի ժամերին կարելի է նկարել ծառեր, ծաղիկներ, որոնց ծանոթացել են էքսկուրսիայի ժամանակ:

Տարրական դասարաններում էքսկուրսիաները հսկայական նշանակություն ունեն որպես աշակերտների խոսքի զարգացման միջոց: Աշակերտները էքսկուրսիաների ընթացքում բազմաթիվ առարկաներ և երևույթներ են տեսնում, որոնք լեզվի մեջ իրենց արտահայտությունը գտնում են բառերի, բառակապակցությունների ձևով, ուստի յուրաքանչյուր նոր առարկա և երևույթ աշակերտներին նոր բառեր ու արտահայտություններ են սովորեցնում: Կարելի է մայրենիի դասերին աշակերտներին հանձնարարել գրել բառեր, որոնց ծանոթացել են էքսկուրսիայի ժամանակ: Այդ բառերով կազմել նախադասություններ, գրել նաև շարադրություն:

Էքսկուրսիաների միջոցով երեխաների մեջ կարելի է նաև սեր առաջացնել դեպի բնությունը, աշխատանքը, աշխատավոր մարդը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Դժվար է պատկերացնել աշակերտների բազմակողմանի զարգացման, համակողմանի դաստիարակության իրականացումը առանց միջառարկայական կապերի օգտագործման, առանց երեխաների հետաքրքրությունների բարձրացման:

Տարրական դասարաններում միջառարկայական կապերի ճիշտ և արդյունավետ օգտագործումը և՛ հեշտ է, և՛ դժվար: Հեշտ է այն առումով, որ համարյա բոլոր ուսումնական առարկաները դասավանդում է միևնույն ուսուցիչը, և նա լավ գիտի, թե որ առարկայից իր աշակերտների գիտելիքներն ու կարողությունները ինչ մակարդակի են: Դժվար է, որովհետև ուսուցիչը իր պատրաստակամությամբ, գիտության տարբեր բնագավառներից լայն տեղեկություններ պետք է ունենա:

Տարրական դասարաններում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ պետք է պատրաստ լինի այդպիսի աշխատանք կատարելու համար: Նա պետք է միշտ պատրաստ լինի երեխաներին հաղորդել տարբեր տեղեկություններ, առանց որի ուսուցումը կարող է ետ մնալ կյանքից և չհետաքրքրել երեխաներին: Ուստի ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի օգտագործումը պետք է պարտադիր լինի բոլոր ուսուցիչների համար, այն պետք է դառնա միջոց հիմնական նպատակին հասնելու համար: Միջառարկայական կապերի իրագործումը ակտիվացնում է աշակերտների մտածողությունը, զարգացնում է նրանց տրամաբանական մտածողությունը, նպաստում է նրանց ճանաչողական կարողությունների ակտիվացմանը: Սակայն միջառարկայական կապերի օգտագործումը պետք է գործադրվի միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը կա և պետք է դասի հիմնական նպատակից չլքելի աշակերտների ուշադրությունը:

Այսպիսով՝ մենք կրթում ու դաստիարակում ենք աճող սերունդ, հետևաբար յուրաքանչյուր դաս պետք է կազմակերպել այնպես, որ այն հետաքրքրի երեխաներին և ոչ թե ձանձրացնի, պետք է այնպես անել, որպեսզի երեխաները հաճույքով հաճախեն դպրոց՝ ամեն անգամ սպասելով մի հետաքրքիր նորության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Труднев В.П.<< Внеклассная работа по математике в начальной школе>>.Пособие для учителей.Москва <<Просвещение>> 1975г.
2. Бантова М. А. и другие. <<Методика преподавания математики в начальных классах>>.Москва << Просвещение>> 1976
3. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. –Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար:Մանկավարժ հրատ.: Երևան 2005թ.
4. Առարկայական չափորոշիչներ
5. Սոկրատ Մկրտչյան- Մաթեմատիկա: Դասագիրք